



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 08 » 06 2020թ.

№ 08/ԼԱ/ – 51

**Հունիսի 1-ից 7-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Հունիսի 1-ին, 4-ին, 7-ին դիտվել է առանց տեղումների եղանակ: Հունիսի 2-3-ին շրջանների զգալի մասում, 5-6-ին առանձին շրջաններում դիտվել է անձրև՝ 1-4մմ (Օձունում՝ 21մմ, Գորիսում և Ստեփանակերտում՝ 13մմ): Առանձին շրջաններում դիտվել է ամպրոպ, քամու ուժգնացում՝ 18-21մ/վրկ արագությամբ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը հունիսի 1-2-ին, 4-5-ին բարձր է եղել նորմայից 2-5, 3-ին, 6-7-ին՝ 1-3 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հունիսի 4-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +33...+35°C, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում՝ +31...+34°C, Տավուշում և Սյունիքի նախալեռներում՝ +25...+30°C, Լոռիում՝ +24...+27°C, Շիրակում, Կոտայքում, Գեղարքունիքում, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +22...+26°C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հունիսի 7-ին: Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում գրանցվել է +2...+7°C, Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝ +4...+9°C (Տաշիրում՝ +2°C), Տավուշում, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում՝ +11...+14°C (Դիլիջանում՝ +6°C), Սյունիքի հովիտներում՝ +12...+16°C:

Ձյան ծածկը պահպանվում է միայն 2800մ-ից բարձր շրջաններում (Արագած բ/լ՝ 70սմ):

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերի մեծ մասում դիտվել է ջրի ելքերի որոշ նվազում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 3սմ-ով և կազմել 1900.80մ (07.06.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա համեմատությամբ բարձր է 2սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան